Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 05

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 29 նոյեմբերի 2023թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը և 19-րդ կետը՝ կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արմեն Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Կողմ 10, Դեմ 0

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

Կողմ 10, Դեմ 0

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Կողմ 10, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգում ներառված հարցի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել:

Քվեարկությամբ որոշումն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____Վ. Բարսեղյան